ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի «Զարիշատի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (16 դասաժամ) , աշխարհագրություն (2 դասաժամ), թվային գրագիտություն և համակարգչային գիտություն (3 դասաժամ) , հայոց լեզու, գրականություն (5 դասաժամ), հանրահաշիվ , երկրաչափություն (11 դասաժամ), պատմություն (5 դասաժամ), անգլերեն (4դասաժամ), ռուսաց լեզու (6 դասաժամ), ֆիզիկա (2 դասաժամ), ֆիզկուլտուրա (5 դասաժամ), ԹԳՀԳ (3 դասաժամ), ուսուցիչների թափուր տեղերի համար,

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2025թ. հոկտեմբերի 10-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025թ հոկտեմբերի 22-ին՝ ժամը 13:00-ին, Շիրակի մարզի Զարիշատի միջնակարգ դպրոցում, հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ,Ամասիա համայնք ,գ. Զարիշատ,1-ին փողոց , շենք 1/3:
Տեղեկությունների համար զանգահարել 093-62-68-33 հեռախոսահամարով: